

«Հաստատում եմ»

«Միքայելյան վիրաբուժության  
ինստիտուտ» ՓԲԸ

Գլխավոր տնօրեն

Է.Ս.Բարսեղյան



« 12 » Փետրվարի 2021 թ.

**ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ  
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

Արթուր Մկրտչի Գրաբակու կողմից «Հեռահար քարափշրում. միզաքարային հիվանդության բուժման բժշկա-տեխնոլոգիական նորամուծություններ եվ արդյունավետ կառավարում» թեմայով բժշկական գիտությունների դոկտորի աստիճանի հայցմանը ԺԴ 00:21 «Ուրոլոգիա» մասնագիտությամբ ներկայացված դոկտորական դիսերտացիայի գիտական և գործնական նշանակության վերաբերյալ

**Թեմայի արդիականությունը**

Միզաքարային հիվանդությունը աշխարհում ամենատարածված ուրոլոգիական ախտահարումներից մեկն է և ուրոլոգիական պրակտիկայում առաջատար դիրք է զբաղեցնում հիվանդացության ցուցանիշներով: Համաճարակաբանական ուսումնասիրությունների տվյալներով զարգացած երկրների բնակչության շրջանում ուրոլիտիասի տարածվածությունը հասնում է 3% -ի և տարի առ տարի այն կայուն աճում է: Ուրոլիտիասով տառապող պացիենտները զբաղեցնում են հիվանդանոցների ուրոլոգիական բնույթի մահճակալների ավելի քան մեկ երրորդը, որոնց կեսից ավելին կազմում են բուն երիկամների ախտահարումները: Բուժական միջամտությունների ներխուժականությունն (ինվազիվություն) ու առաջացող բարդությունների բարձր հաճախությունն այն գործոններն են, որոնք խնդրահարույց են դարձնում ուրոլիտիասով տառապող պացիենտների արդյունավետ բուժումը: Ժամանակակից բժշկական ոչ ինվազիվ տեխնոլոգիաների շնորհիվ կլինիկական պրակտիկայում լայն տարածում է գտել հեռահար հարվածալիքային լիտոտրիպսիան, ինչը թույլ է տալիս միզաքարային հիվանդությամբ տառապող պացիենտների ճնշող մեծամասնությանը ազատել միզային քարերից՝ գործնականում առանց տարիքային սահմանափակման և պացիենտի առողջության համար այլ հետևանքների: Իր բարձր արդյունավետության և ցածր

վնասվածության(տրավմայի) պատճառով հեռահար հարվածալիքային լիթոտրիպսիան դարձել է Հայաստանի Հանրապետության առավել մասնագիտացված ուրոլոգիական կլինիկաներում առօրյա գործառնություն: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ուրոլիտիասով տառապում են, հիմնականում 18-55 տարեկան ամենաաշխատունակ տարիքի անձինք, ուրոլիտիասով տառապող պացիենտների արդյունավետ բուժման ու այդ հիվանդության կառավարման օպտիմալ մեթոդների մշակումը պետք է դիտարկել, ոչ միայն բժշկական, այլև, որպես կարևոր սոցիալական ու տնտեսական նշանակություն ունեցող խնդիր:

**Գիտական հետազոտության և ստացված տվյալների նորույթը**

Արթուր Գրաբսկու ներկայացրած դիսերտացիոն աշխատանքն ունի մեծ գիտական և գործնական արժեք: Հեղինակն առաջին անգամ ապացուցողական բժշկության մեթոդաբանության միջոցով ուսումնասիրել է Հայաստանի Հանրապետությունում ուրոլիտիազի տարածվածությունն ըստ միզային քարերի կազմի, կազմել է հանրապետության մարզերում ուրոլիտիազ հիվանդության տարածվածության համապարփակ քարտեզ միզային քարերի քիմիական բաղադրակազմի հետազոտության արդյունքների հիման վրա: Ուսումնասիրել է նաև Երևան քաղաքում և մարզերում իսմելու ջրի կարծրության և հանքայնացման ազդեցությունը միզային քարերի առաջացման և քարերի քիմիական կազմի վրա: Իրականացվել է ուլտրաձայնային ուղղորդմամբ հարվածալիքային լիթոտրիպսիայի սեանսների արդյունավետության և առանձնահատկությունների համեմատական վերլուծություն: Երիկամների ստորին բաժակների միզային քարերի հեռահար հարվածալիքային լիտոտրիպսիայի արդյունավետությունը բարձրացնելու համար մշակվել և կլինիկական պրակտիկա է ներդրվել հարվածալիքային քարափշրման նորարարական մեթոդ: Ուսումնասիրվել է ուրոլիտիասով տառապող երեխաների մոտ ուլտրաձայնային ուղղորդմամբ հեռահար հարվածալիքային լիտոտրիպսիայի սեանսների առանձնահատկություններն ու արդյունավետությունը: Հետազոտվել և գնահատվել է լիտոտրիպսիայի ընթացքում միզային ուղիների էպիթելի (ուրոթելիում) վրա հարվածային ալիքների ազդեցությունը, ուրոթելիումի բջջաախտաբանական փոփոխությունների աստիճանը:

Կատարվել են միզուղիների էպիթելի բջջաբանական փոփոխությունների համեմատական վերլուծություններ, տարբեր տեսակի հարվածային ալիք գեներացնող սարքերի օգտագործման դեպքերում:

**Ստացված արդյունքների գիտական և գործնական նշանակալիությունը**

Հեղինակի դիսերտացիոն աշխատանքը տեսական առումով արժանի է բարձր գնահատականի, քանի որ այն ի սկզբանե հիմնարար կողմնորոշում ունի՝ նպատակ

ունենալով լուծել հստակ բժշկական խնդիր՝ միզաքարային հիվանդությամբ տառապող պացիենտների բուժման մարտավարությունն օպտիմալացնելու և բուժման արդյունքները բարելավելու համար: Մտացված արդյունքները ապացուցում են, որ ուրոլիտիասով տառապող պացիենտների բուժման համար ուլտրաձայնային ուղղորդմամբ հեռահար հարվածալիքային լիտոտրիպսիայի օգտագործումը հիմնավորված է պացիենտների բոլոր խմբերի, ներառյալ երեխաների մոտ: Հեղինակը հիմնավորում է, որ միզային քարերի սոնոգրաֆիկ տեղայնացումը ծախսարդյունավետ և անվտանգ երևակայման եղանակ է, որն անհերքելի առավելություն ունի միզուղիների մեծ մասում միզային քարեր հայտնաբերելու և բուժման արդյունավետությունը իրական ժամանակում գնահատելու համար՝ առանց ռենտգենյան ճառագայթներով հետազոտելու: Հեղինակի կողմից առաջարկվող երիկամի ստորին բաժակներում տեղակայված միզային քարերի քարափշրման ընթացքում փշրված միզային քարի բեկորների հարվածալիքային տեղաշարժումը նպաստում է միզուղիներով դրանց ավելի արագ անցմանը: Ապացուցվել է, որ հեռահար հարվածալիքային լիտոտրիպսիան միզապարկի քարերով պացիենտների բուժման ամենաինվազիվ մեթոդն է՝ բուժման լավագույն արդյունքներով, առանց բարդությունների, անզգայացման և հոսպիտալացման անհրաժեշտության: Ելնելով ներկայացված գիտական հետազոտությունների և հեռահար հարվածալիքային լիտոտրիպսիայի երկարամյա կլինիկական պրակտիկայի արդյունքներից հրատարակության են պատրաստվել Հայաստանի ուրոլոգիական ասոցիացիայի հեռահար լիտոտրիպսիայի մեթոդով միզաքարային հիվանդության բուժման տեղական արձանագրություններ, մեթոդական ուղեցույցներ, դասագիրք:

**Հեղինակի անձնական ներդրումը**

Հեղինակի անձնական ներդրումը կայանում է ներկայացված գիտական հետազոտության հայեցակարգային ուղղության որոշման, նպատակների ու խնդիրների ձևավորման և դիսերտացիայի թեմայով արդիական գրականության վերլուծության մեջ: Հեղինակն անձամբ է ձևավորել և գիտականորեն հիմնավորել հետազոտության աշխատանքային վարկածը, պլանավորել ուսումնասիրության իրագործման ընթացքը, անցկացրել է հարվածալիքային լիտոտրիպսիայի սեանսներն ու անհրաժեշտ բուժական միջամտությունները: Կազմակերպել է միզաքարային հիվանդությամբ պացիենտների բոլոր խմբերի բուժօգնության ցուցաբերումը: Իրականացրել է իր կողմից կատարված հետազոտությունների և ուսումնասիրությունների տվյալների հավաքագրումը, համակարգումը, այդ տվյալների բանկի ստեղծումն ու վիճակագրական մշակումը, որոնք հետագայում ամփոփել է գիտական եզրակացությունների և գործնական առաջարկությունների տեսքով:

**Հետազոտությունների արդյունքների օգտագործման առաջարկություններ**

Հեռահար հարվածալիքային լիթոտրիպսիայի մեթոդով ուրոլիթիասի բուժման հեղինակի նորարարական առաջարկություններն և մշակված մեթոդները ներդրվել են Մխիթար Հերացու անվան Երևանի պետական բժշկական համալսարանի ուրոլոգիայի ամբիոնի կլինիկական բազայ հանդիսացող Իզմիրյան բժշկական կենտրոնի, ուրոլոգիայի բաժանմունքի առօրյա պրակտիկայում: Հեղինակի նորարարական առաջարկները ընդգրկված են նաև հեռահար լիթոտրիպսիայի ժամանակակից սարքեր արտադրող շվեյցարական «Storz Medical AG ֆիրմայի» ներքին պորտալի տվյալների բազայում: Դիսերտացիոն տեքստում նկարագրված մեթոդները ընդօրինակելի են, ստացված արդյունքներն արժանահավատ և հիմնավորված են, ինչը հնարավորություն է տալիս խորհուրդ տալ հեղինակի կողմից առաջարկված միզաքարային հիվանդության ախտորոշման և բուժման նորարարական մեթոդները ուրոլոգիական բժշկական հաստատությունների պրակտիկայում լայն կիրառման համար: Առաջարկվում է հետբուհական և շարունակական բժշկական կրթության բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողներին, ռեզիդենտներին և կուրսանտներին դասավանդելիս օգտագործել սույն գիտական աշխատանքի նյութերը:

**Դիսերտացիայի թեմայով հեղինակի հրապարակումների բնութագիրը**

Ատենախոսության թեմայով հրատարակվել է 23 գիտական աշխատանք, որից 9-ը՝ օտարերկրյա, 14-ը՝ կենտրոնական ամսագրերում, որոնք ներառված են Բարձրագույն ատեստավորման հանձնաժողովի կողմից առաջարկված՝ բժշկական գիտությունների դոկտորի գիտական կոչման հայցորդների դիսերտացիաների հիմնական արդյունքների հրատարակման համար առաջարկվող ամսագրերի ցուցակում: Հրապարակումներն ամբողջությամբ արտացոլում են դիսերտացիայի բովանդակությունը: Հեղինակի ստացել է նաև 3 գյուտի արտոնագիր և հեղինակային իրավունքի վկայագրեր:

**Դիսերտացիայի համառոտ բովանդակությունն ու ավարտվածությունը**

Դիսերտացիան ներկայացված է մենագրական ոճով՝ համակարգչային 293 էջ բնօրինակ՝ բաղկացած ներածությունից, գրականության ակնարկից, սեփական հետազոտության 7 գլուխներից, եզրակացություններից, գործնական առաջարկներից, հղումների ցանկից և հավելվածից: Այն պատկերազարդված է 164 բնօրինակ գծագրերով և 44 տեղեկատվական աղյուսակներով, մատենագիտական ցանկը ներառում է 438 վերնագիր, որից 32-ը ռուսական և 397 արտասահմանյան հրապարակումներ:

Ներածության մեջ հիմնավորվում է տվյալ թեմայի արդիականությունը, պարզ ու հստակ նշված են ուսումնասիրության գիտական նորույթը, նպատակն ու խնդիրները, ստացված արդյունքների տեսական և գործնական նշանակությունը, իսկ պաշտպանության

հիմնական դրույթները լիովին համապատասխանում են ուսումնասիրության արդյունքներին:

**Առաջին գլուխն** արտացոլում է միզաքարային հիվանդության համաճարակաբանությունը, առաջացման ռիսկի գործոնները ախտաբանությունը, դրա բուժման նվազագույն ինվազիվ նորարարական տեխնոլոգիաները, ուրոլիտիասի բուժման կառավարման, երևակայման օպտիմալ մեթոդները, առաջնահերթ խնդիրները, նաև նվազագույն ինվազիվ բուժման ժամանակակից տեխնոլոգիաներով ուրոլիտիասի բուժման առանձնահատկությունները երեխաների մոտ:

**Երկրորդ գլուխը** նվիրված է հետազոտության նյութերին և մեթոդներին, նկարագրված են հետազոտված և ուսումնասիրության մեջ ներառված ուրոլիտիասով 1409 պացիենտների կլինիկական բնութագրերը, ախտորոշիչ մեթոդները, դրանց ընթացիկ հետազոտման և բուժման կառավարման ալգորիթմը:

**Երրորդ գլխուխը** նվիրված է՝ Հայաստանի Հանրապետության տարբեր մարզերում ուրոլիտիասի տարածվածության և ռիսկի գործոնների հետահայաց կլինիկական և համաճարակաբանական վերլուծությանը, ինչպես նաև միզային քարերի առաջացման ռիսկի գործոնների տարածաշրջանային առանձնահատկություններին ու խմելու ջրի քիմիական բաղադրության ազդեցությանը ուրոլիտիասով հիվանդացության վրա:

**Չորրորդ գլուխն** ամփոփում է հեռահար հարվածալիքային լիտոտրիպսիայի արդյունավետության ապացույցների բազան՝ որպես ուրոլիտիասի բուժման լավագույն մեթոդ: Նկարագրված է հեռահար հարվածալիքային լիտոտրիպսիայի նորարարական մեթոդը երիկամի ստորին բաժակների միզային քարերի բուժման համար, ինչպես նաև հեռահար հարվածալիքային լիտոտրիպսիայի արդյունավետության ուսումնասիրությունների արդյունքները՝ քիմիական տարբեր բաղադրություն ունեցող միզային քարերի լիտոտրիպսիայի դեպքերում:

**Հինգերորդ գլխում** նկարագրվում է մարմնի զանգվածի բարձր ինդեքս՝ ավելցուկ քաշ ունեցող պացիենտների միզաքարային հիվանդության տարիքային և սեռական առանձնահատկություններն ու հարվածալիքային լիտոտրիպսիայի մեթոդով բուժման առանձնահատկությունները:

**Վեցերորդ գլուխը** նվիրված է հեռահար հարվածալիքային լիտոտրիպսիայի մեթոդով երեխաների միզաքարային հիվանդության բուժման արդիական տեսակետներին, որտեղ նկարագրված են երեխաների մոտ ուլտրաձայնային ուղորդմամբ հեռահար հարվածալիքային լիտոտրիպսիայի սեանսների չափորոշիչները, հաճախականությունը, առանձնահատկություններն ու արդյունավետությունը:

**Յոթերորդ գլխում** ներկայացվում է պացիենտներին անհատականացված մոտեցման արդյունքում, միզապարկի միզային քարերի հեռահար հարվածալիքային լիտոտրիպսիան, որպես բուժման նվազագույն ինվազիվ, բարձր արդյունավետությամբ, առանց բարդությունների ոչ ծախսատար մեթոդ:

**Ութերորդ գլուխը** նվիրված է ծագման տարբեր աղբյուրներ ունեցող սարքերից ստացվող հարվածային ալիքներով իրականացվող լիտոտրիպսիայի ընթացքում ուրոթելիումի վրա այդ ալիքների բազմագործոն ազդեցության հետազոտություններին:

**Եզրակացության** մեջ, հեղինակը բովանդակալից արտացոլում է դիսերտացիայի հիմնական դրույթները, ամփոփում է վիճակագրական վերլուծության արդյունքներն ու ստացած տվյալները: Ձևակերպված եզրակացությունները հազեցած են հստակ բովանդակությամբ և արտացոլում են հեղինակի կողմից առաջադրված առաջադրանքների լուծումը՝ վկայելով դիսերտացիոն աշխատանքի նպատակին հասնելու մասին: Գործնական ուղեցույցները ներկայացնում են մի շարք կարևոր խորհուրդների հիմնավոր շարք ուրոլիտիասի նորարարական բուժման կառավարման մարտավարության և տեխնիկայի վերաբերյալ:

**Եզրահանգում**

Արթուր Մկրտչի Գրաբսկու դիսերտացիոն աշխատանքը քննարկվել է «Միքայելյան վիրաբուժության ինստիտուտ» ՓԲԸ Գիտական խորհրդի թիվ 1 նիստում «12» փետրվարի 2021 թ.

Պաշտոնական գրախոսներ՝ «Միքայելյան վիրաբուժության ինստիտուտ» ՓԲԸ Սիրտ-անոթային վիրաբուժության ամբիոնի վարիչ, սիրտ-անոթային վիրաբուժության կլինիկայի ղեկավար բ.գ.դ. Տ.Լ.Սուլթանյան և «Միքայելյան վիրաբուժության ինստիտուտ» ՓԲԸ Ուրոլոգիայի կլինիկայի ղեկավար բ.գ.թ. Վ.Հ.Շահսուվարյան:

Նիստին ներկա էին բժշկական տնօրեն՝ Ա.Ա.Ղազարյանը, ընդհանուր վիրաբուժություն կլինիկայի ղեկավար՝ Ս.Ա.Ստեփանյանը, դիմա-ձնոտային վիրաբուժության կլինիկայի ղեկավար՝ Ա.Վ.Պապիկյանը, կոլոպրոկտոլոգիայի վիրաբուժության կլինիկայի ղեկավար՝ Ա.Կ.Էնֆենջյանը, լապարոսկոպիկ և ընդհանուր վիրաբուժություն բաժանմունքի վարիչ՝ Ա.Ռ.Հարությունյանը, կրծքագեղձի վիրաբուժություն բաժանմունքի վարիչ՝ Ա.Հ.Քոչարյանը, սիրտ-անոթային վիրաբուժության բաժանմունքի վարիչ՝ Ռ.Ս.Պալոյանը, օրթոպեդիայի և վնասվածքաբանության բաժանմունքի վարիչ՝ Ս.Վ.Սարոյանը, Նյարդավիրաբուժության բաժանմունքի վարիչ՝ Ա.Ռ.Ամրոյանը, վերակենդանացման և ինտենսիվ թերապիայի բաժանմունքի վարիչ՝ Ա.Ա.Փամբուխյանը և թվով 41 բժիշկներ:

**Քննադատական դիտողություններ**


Դիսերտացիան լավ է ձևավորված, հստակ պատկերազարդված է և չի պարունակում ավելորդ տեղեկատվություն:


Դիսերտացիոն աշխատանքի գրախոսության ընթացքում լուրջ դիտողություններ չեղան: Ոճական և ուղղագրական սխալները, որոնք առկա են աննշան քանակությամբ, չեն խեղաթուրում ներկայացված նյութի իմաստը և չեն ազդում ստեղծագործության ընկալման ամբողջականության վրա:

Այսպիսով, «Հեռահար քարափշրում. միզաքարային հիվանդության բուժման բժշկատեխնոլոգիական նորամուծություններ եվ արդյունավետ կառավարում» թեմայով ԺԴ 00:21 մասնագիտությամբ բժշկական գիտությունների դոկտորի աստիճանի հայցման Արթուր Մկրտչի Գրաբսկու դիսերտացիոն աշխատանքը ավարտված գիտական որակյալ աշխատանքն է, որում հեղինակի կողմից առաջադրված տեսական դրույթներն ու գործնական առաջարկությունները, ամբողջությամբ կարող են որակվել որպես գիտական նվաճում ժամանակակից ուրոլոգիայի զարգացման գործում:

Ներկայացված դիսերտացիոն աշխատանքը ամբողջությամբ համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն որակավորման հանձնաժողովի դոկտորական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է բժշկական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական գրախոսներ՝

«Միքայելյան վիրաբուժության ինստիտուտ» ՓԲԸ  
Ուրոլոգիական կլինիկայի ղեկավար  Բ.Գ.Թ. Վ.Ն.Շահսուվարյան

«Միքայելյան վիրաբուժության ինստիտուտ» ՓԲԸ  
Միրտ-անոթային վիրաբուժության ամբիոնի վարիչ,  
Միրտ-անոթային վիրաբուժության  
կլինիկայի ղեկավար  Բ.Գ.Դ. Ս.Լ.Սուլթանյան

«Միքայելյան վիրաբուժության ինստիտուտ» ՓԲԸ գլխավոր տնօրեն՝  Է.Ս.Բարսեղյան



12.02.2021 թ.